

Ռ. Ա. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Պարսկական գիրությունների թեկնածու

## ԱՂՉՆԻՔԱՏՎՅԵՐԻ ՆԱՐՄԱՆԵԿԱՆ ՇԱՐՔԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՈՐՈՇ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐԻ ՈՒ ԾԵՄԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարսանյաց ծեսը պատմաագագրական կարևոր աղբյուր է ժողովուրդների էթնիկ պատմության, հատկապես միանշատակարգային ժամանակաշրջանի հասարակական կարգի, ամուսնության ձևերի, հավատալիքների ու կրոնական պատկերացումների, հենց բուն հարսանյաց ծեսի հետազոտման համար<sup>1</sup>: Այն համարվել է հասարակական կյանքի մեծ իրադարձություն և, ըստ էության, սովորույթների, արարողությունների և ուրախությունների մի համալիր է:

Հարսանիքը հայոց մեջ գրեթե ամենուրեք կատարվում էր դաշտային աշխատանքներն ու ձմռանն անխապատրաստությունը ավարտելուց հետո՝ սկսած աշնանից մինչև Բարեկենդանի վերջը: Բաղեշում հարսանիքը անում էին Բարեկենդանի վերջին օրերին՝ խուսափելով առանձին ծախսից: Մեծ պահքից մինչև հաջորդ աշուն հարսանիք չէր լինում, միայն այրիներին էր թույլ տրվում ամուսնանալ: Հարսանիքը, որ Սասունում *հարսնած* էր կոչվում, կարող էր նշանակվել շաբաթվա բոլոր օրերին, բացի չորեքշաբթիից: Այդ օրը «ոչ հարսնած էր գնում, ոչ պսակ էր լինում, որովհետև չար օր էր համարվում»<sup>2</sup>:

Հարսանիքն սկսելուց մեկ օր առաջ տղայի հոր կողմից մի տղամարդ գնում է հարսնացուի հոր տուն՝ *հարսնածի* գալստյան օրվա ու պահի վերաբերյալ հաղորդելու: Այդ մարդը հայտնի էր *աղվես* անունով: Ինչպես նշանդրեքին, այս աղվեսը եթե չէր ծպտվում, երեխաների կողմից ծաղրածանակի էր ենթարկվում: Ըստ երևույթին աղվեսը խորհրդանշում էր հնագույն ժամանակներում հանդիպող առևանգողին, իսկ երեխաները՝ նրա ընդդիմա-

<sup>1</sup> Տե՛ս Խ. Սամուելյան, Նին Նայասարանի կուլտուրան, հ. III, Եր., 1941, էջ 99-132: Վ. Բոդյան, Նայ ազգագրություն (համատար ուրվագիծ), Եր., 1974, էջ 132-155: Նույնի Նարսանեկան ձևերի ու սովորույթների նկարագիր, գրանցված XIV դարում, «Բաները Մարենաղարանի» 1956, N 3, էջ 53-56: Տե՛ս Զ. Թ. Կարապետյան, Выкуп в сваденных армян и его социально-экономические корни, «Աշխատություններ Նայասարանի պատմության պատմական թանգարանի», III, էջ 73-146, Գ. Ա. Վարդումյան, Է. Տ. Կարապետյան, Նայասարանի կուլտուրականների ընդհանրությունը և ընդհանրական կենցաղը, Եր., 1963, Կ. Վ. Սևդոյան, Լևինականցիների ժամանակակից հարսանիքը, «Տեղնկազիր գիր. ակադ.», 1965, N 9, Ա. Ե. Թոր-Տարկեսյան, Современная семья у армян, Москва, 1972, էջ 108-148, Շ. Դ. Лисвяця, Очерки этнографии дореволуционной Армении, КЭС, I, Москва, 1955, Նույնի՝ Ջանգեզուրի հայերը, Եր., 1969, էջ 185-199, Լ. Մ. Варламян, Пережитки института инцестуа и армян (по материалам сваденной обрядности), ՊԲՆ, 1967, N 4, Զ. Վ. Խառատյան, Հայոց հարսանյաց ծեսի ֆունկցիոնալ պաշարամունքային կառուցվածքը, Գիտական նախաշրջան՝ նվիրված ՍՄՄ կազմավորման 60-ամյակին, «Ջեկուցումների թեկնածու», Եր., 1982, էջ 13-14: Նույնի «Եզ մորթելու» սովորույթը և փնսան հայոց հարսանիքում, ՎՎԿ, «Լրագիր հաս. գիր.», 1991, N 2, էջ 116-124 և այլն:

<sup>2</sup> Տե՛ս Վ. Պարսյան, Սասնա ազգագրությունը, Երևան, 1965, էջ 241:

դիրներին: Հարսանիքը տևում էր 3-7 օր: Գյուղական հարսանիքներին մասնակից ու հանդիսատես էր դառնում ողջ համայնքը, և հարսանյաց յուրաքանչյուր հանդես վեր էր ավում մի յուրօրինակ համայնական տոնախմբության: Այն կազմակերպված ու պատշաճ անցկացնելու համար ընտրվում էին ղեկավար և գործող անձինք: Ինչպես Հայաստանի բոլոր պատմագագադրական մարզերում, Աղձնիքում ևս հարսանեկան ծիսակատարության գլխավոր դերը թափում էր. կարևոր գործառույթներ ունեին մակարները, հարսնաքույրը, հարսնեղբայրը և այլք:

Աղձնիքում փեսացուի և հարսնացուի տներում հարսանեկան ծեսերն սկսվում էին հինգշաբթի օրվանից, որը հայտնի է *հաց ու խմորի օր* անվամբ, իսկ ուրբաթ օրը, որը փաստորեն հարսանիքի բուն գործողություններն սկսելու օրն էր, հայտնի է *եզ մորթելու կամ մսացուի օր, մակար-խաչեղբայրների կամ ազապչարիների օր, փեսացուին ածիլելու և լողացնելու օր*: Այդ օրը, երեկոյան, տեղի էր ունենում մակարների (*խաչեղբայր, ազապչարի*) ընտրությունը, որոնք լինում էին 5-10 հոգի: Այդ երկու օրերը որոշ տեղերում կոչվում էր *տաշտադրոնք*: Աղջկա տան *ուրբաթօրյա* ծիսական անունը հայտնի էր *ծաղկոց* անով, աղջիկը ամուսնանալով պիտի ծաղկի ու պտղաբերի: Հարսնացուի տանը նրան ուրախացնելու, հոգսերը հոգալու և «պաշտպանելու» համար շուրջն էին հավաքվում ամենամտերին ընկերուհիները, որոնց անվանում էին *ծաղկետ*: Որոշվում էր ուղեկցող *հարսնաքույրը* և *հարսնեղբայրը*: Ուրբաթ օրվա գիշերը լողացնում էին պատկվողներին, հինադնում ձեռքերը, ածիլում փեսային, պատրաստում և զարդարում փեսայի ուտքը: Ծաղկոցը փեսայի տանը կատարվող տաշտադրոնքի համեմատ ավելի կարճատև ու զուսպ արարողություն էր: Ընթանում էր տխուր, քանի որ աղջիկը պիտի հեռանար տնից: Այստեղ հրավիրյալները բացառապես ազգականներն էին, հիմնականում աղջիկներ ու կանայք: Ծաղկոցի ուտելիքը՝ արջառ կամ մի քանի ոչխար, գինի և այլն, վաղօրոք ուղարկվում էր փեսայի տնից:

Մակարների և հարսնքուր-ծաղկետների հիմնական դերը հարս ու փեսային «պաշտպանելն» էր: Փեսայի կողմը հրավիրում էր իր մերձավոր ընկերներին՝ իբրև թիկնապահների, որոնք հարսանիքի ամբողջ ընթացքում հոգում էին նրան, «պաշտպանում» հոգևոր և մարմնավոր «թշնամիներից», կրում ուտքը<sup>3</sup>, «ճակատամարտում» վերադարձող հարսնածիկտրիճների, ասել է թե՛ հարսնացուի զինվորների հետ և այլն: Նրանք ամենուրեք հայտնի էին մակարներ անունով, որ *քաջերի, կտրիճների* խումբ կամ *քաջ զինվորներ* իմաստն ունեն: Սասունում *մակար* եզրույթի փոխարեն օգտագործում էին *խաչեղբայր*, նաև *ազապչարի* հոմանիշները: Մակարները զինվում էին սառը զենքերով, մահակներով, անզամ հրացաններով:

Հարսնացուի և փեսացուի թիկնապահներ ընտրելուն զուգընթաց՝ տեղի էր ունենում

<sup>3</sup> Ուտք, այլ փրկելում *ևռոճ*, բազկաչափ խաչանձև փայտ, գարդաված գույնզգույն թելերով, ջրի, չամչի, ընկույզի միջուկի շարաններով, նոներով, կարմիր խնձորով, կարմիր ու կանաչ ներկած ձվերով: Համարվում է և՛ տրապասկ փեսա-թագվորի եշաններից մեկը, կոչվում է նաև *փեսասծաս*: Հարսն ու փեսան պատկադրության գնալիս ուտքը կրում է *ազապչարից* մեկը և նրանց առջևից փանում եկեղեցու դուռը, ուր պարանիները ձգվում են խլիլ ուռքի վրայի մրգերը: Հարսանիքի ավարտին փեսայի թագը վերցնելու արարողությունը ուղեկցվում էր ուռքի բարիքները փեսայի և ազապչարի-մակարների կողմից վայելումով:

հարսանիք հրավիրելու ծեսը, որ հայտնի էր *կոչնկան* (նաև *կանչողք*) անվամբ, Բաղեշում *խոր կանչել* (հյուր կանչել):

Հարսանքավորներին՝ հարսնառ կամ հարսնած գնացողներին, Սասունում նաև անվանում էին *խոնդի*, իսկ Բաղեշում և շրջակա գյուղերում՝ *խրեք* (հյուրեր): Այստեղ հարսանիքը հրավիրելու համար նվագողները բարձրանում էին հարսնետան կտուրը և հատուկ կանչի եղանակով ավետում հարսնառ-հարսնածը նախապատրաստելու սկիզբը: Սասունում հրավիրում էին *ծաղերով* (կարկանդակ) և մի-մի բաժակ օղի կամ գինի հրամցնում: Խոնդիներին մատուցվող խոնչաների վրա լինում էին նաև խորոված ոչխարի՝ խորվուի կամ հավի միս:

Խարզան գավառի Մլքիշան և Բրա գյուղերում հրավիրող էին նշանակում փեսայի ազգական մի տղամարդու կամ պատանու: Վերջինս, ներկայանալով ընտանիքներին, նրանց էր հանձնում մի-մի կարմիր խճճոր կամ թաշկինակ՝ որպես հրավերքի խորհրդանշան<sup>4</sup>: Հազո քաղաքում այդպիսի խորհրդանիշ էին համարում վրան նուր ու խճճոր դրած հացը<sup>5</sup>: Աղձնիքին մերձակա Հայնի քաղաքում կնքահայրը, փեսան, մի երիտասարդ բարեկամ տնից-տուն էին գնում և հրավիրում հարսանիքի: Հրավիրվածները փեսայի գրպանը չամիչ, բոխիչ, նուր էին լցնում, որոնք հայոց մեջ ունեցել են նորասպասկներին պտղունակություն հաղորդելու իմաստ<sup>6</sup>:

Մեկ այլ տարբերակում հրավիրողները հարսանեկան հանդերձներով զարդարված դեռատի աղջիկներ ու տղաներ էին, որոնք երկու խումբ կազմած շրջում էին տները՝ ի պատասխան ստանալով չորացրած պտուղներ, քաղցրավենիք, հավեր (հիմնականում աքլոր, հակառակ դեպքում՝ «գողանում էին» այն՝ որպես առնականության և հաղթանակի խորհրդանիշ): Կոչնկան գնացողներից մեկը փեսայի քույրն էր՝ ազգականուհիների հետ: Տղա կոչնկաներից էր *թագվորը* (Աղձնիքում գործածվում էր նաև *թագավոր* ձևով)՝ իր թիկնագորի ղեկավարի՝ ազապաշու հետ, որին կոչում էին նաև *խաչեղբայր*: Վերջինս իր հետ տանում էր գինով լիքը փարչ ու *կթղա*՝ մերթ ընդ մերթ գինի հրամցնելով խմբի երիտասարդներին ու հանդիպող մարդկանց: Թագվոր-փեսան՝ «թագը» գլխին և խաչեղբայրը գուլված ու զարդարված էին հարսանեկան զգեստներով: Փեսա-թագվորը և խաչեղբայրը հրավիրվող ընտանիքներից ստանում էին տնայնագործ բանված գուլպաներ, շալե գոտիներ, ասեղնագործ գրակ, իսկ մերձավոր ազգականներից՝ կով, ձի, ոչխարներ և այլն<sup>7</sup>: Փաստորեն հրավիրյալ և մասնակիցն էր դառնում ողջ համայնքը:

Այսպիսով, տղայի կողմը փեսայի և ազապաշու միջոցով հրավիրում էր հարսնածի համար նախատեսված անձանց, որոնց թվում հատուկ ընտրությամբ պետք է լինեին հայտնի ըմբիշներ, ձեռնամարտի մեջ քաջավարժ տղամարդիկ, վագորդներ, ցատկորդներ, կատակակոնվի փորձ ունեցողներ, ձիավարժներ, ձիով մականախաղերի հմուտ երիտասարդներ: Նրանցից բացի, պետք է ներկա լինեին նաև համայնքի նշանավոր տները ներկայացնող մարդիկ, նվագողներ, երգողներ ու պարողներ, ինչպես նաև հարսի զգեստ-

<sup>4</sup> Տնն Ռ. Նահապետյան, Դաշտային ազգագրական նյութեր (այսուհետև՝ ԴՆՆ), ք. 12, էջ 79, ք. 13, էջ 22:

<sup>5</sup> Տնն «Բիրակն», 1899, թիվ 3, էջ 37-38:

<sup>6</sup> Տնն Բ. Ժամկոջան, Հայնի, Բեյրութ, 1952, էջ 68:

<sup>7</sup> Տնն «Բագմավեպ», 1867, էջ 308-309:

ները գովերգերով հազցնող երկու մանկամարդ կին և հարսին հասակակից աղջիկներ, կանայք, որոնց *բարբոտիկ* (հարսնատաջնորդ) էին ասում: Սրանք *հարսնքորի* հետ հարսնացուից անբաժան էին մնում մինչև առագաստի գիշերը: Բոլորը միասին 40-50 հոգի էին<sup>8</sup>:

Նկատենք նաև, որ Աղձնիքում հարսնածի կազմն ընտրվում էր երկու կերպ: Այսպես, լեռնային շրջաններում, օրինակ՝ Սասունում, փեսան, քավորը և մակար-ազապչարի-թիկ-նապահները հարսնածին չէին մասնակցում<sup>9</sup>: Փեսայի և քավորի բացակայության դեպքում հարսնածը ղեկավարում էր տղայի հայրը կամ ազգականներից մեկը, որը հարսնածի «նակատամարտը» ղեկավարելու փորձ ուներ: Մինչդեռ Բաղեշում և Աղձնիքի հովտային շրջաններում փեսան, քավորը և մակարները հարսնածի պարտադիր մասնակիցներն էին: Այս դեպքում հարսնածի ընդհանուր ղեկավարությունն իրականացնում էր քավորը<sup>10</sup>: Այստեղ ազապչարիներ ընտրվում էին 10 հոգի: Զիավորների թիվը և նրանց առաջնորդին որոշելու համար մրցույթ էր կազմակերպվում. բոլորը կանգնում էին մի գծի վրա՝ սպասելով նվագի ազդանշանին: Պարկապզուկը փչում էր *ջիրիճո* եղանակը և բոլորը սլանում էին. ով յոթ պտույտ կատարեր և առաջինը հասներ, նա փեսայի մորից ստանում էր Դիարբեքիիից գնված կարմիր շալ: Նրան էլ իրավունք էր տրվում ընթանալ հարսնածի առջևից: Այդ նույն ձևով հարսի հոր տնից դուրս գալիս ով հարսնածի վերադարձի լուրը շուտ հասցներ հարսանքատուն, փեսայի մորից այս դեպքում կստանար մատանի<sup>11</sup>:

Բուն հարսանյաց հանդեսը, որով վերջնականապես վավերացվում և ավարտին էր հասցվում ամուսնության գործարքը, բաժանվում էր հետևյալ փուլերի. հարսնատ, հարսանեկան հանդես, պսակ և առագաստ: Այս ամենն իրագործվում էր մի շարք ծիսական-մոգական գործողություններով, ինչպիսիք էին հարսին հազցնելու, փեսային սափրելու, լողացնելու և հազցնելու, *ուռք* կամ *նուռձ* կոչված փեսածառը զուգելու և այլ ծեսերը, որոնք լրացնում, ամբողջականացնում և առավել բազմերանգ էին դարձնում հարսանեկան հանդեսը: Ծիսաշարի մի շարք գծեր էլ դրան հաղորդում էին մի տեսակ թատերականացված բնույթ, որի առանձին արարներ ամուսնության հնագույն սովորույթների վերապրուկներ էին:

Ուրբաթ օրը, մայրամուտից հետո, իսկ Բաղեշ քաղաքում՝ մութն ընկնելուն պես, ջահերով (*ֆանար* կոչված նավթավառով կամ մոմերով) լուսավորելով երթի ճանապարհը, *հարսնածն* անհրաժեշտ մթերքներով<sup>12</sup> ուղևորվում էր հարսնացուի տուն: Եթե հարսը նույն բնակավայրից էր լինում, հարսնածը գնում էր հետիոտն, իսկ եթե այլ գյուղից՝ ձիերով՝ հարսի համար տանելով էգ ձի: Պատահում էր, որ չունևոր փեսայի հարսնածը հետիոտն էր գնում նաև հեռավոր գյուղ, իսկ ձմռանն ունենում էր միայն հարսնացուին բերելու *դախուկ* կոչված մի թեթև սահմակ: Այս դեպքում սահմակը հարսնածի երիտասարդնե-

<sup>8</sup> Տե՛ս ԴՆՆ, փ. 13, էջ 20-21:  
<sup>9</sup> Այդ սովորույթի պարզառոտ է, որ նախապես ցույց տրված գնդեցիկ հարսնացուի փոխարեն հարսնածի օրը երբեմն հարսնացու էին կանգնեցնում փանը մնացած փզեղ աղջկան (տե՛ս ԴՆՆ, փ. 13, էջ 24-25):  
<sup>10</sup> Տե՛ս ԴՆՆ, փ. 1, էջ 75, փ. 2, էջ 200-202:  
<sup>11</sup> Տե՛ս ԴՆՆ, փ. 13, էջ 19-20:  
<sup>12</sup> Սովորաբար փանում էին երինջ կամ մի քանի ոչխար, բլրոր, յուղ և այլն:



Լողացնելուն հաջորդում էր *հինադերքի* ծեսը: Քավորկինը մի քանի հարսների և աղջիկների հետ տանում էր սկուտեղը, որում գինով շաղախած հինա էր՝ շուրջը նու և խճճորով ու քսան մոմով զարդարված՝ հինալելու հարսի ձեռքերն ու ոտքերի մատները: Ներկա կանաչք և աղջիկները հինալում էին նաև իրենց խալերը: Հինա դնելը մասնողական մի ծես էր՝ մյուս մասնակիցներին ևս բախտավորություն շնորհելու, ջահել աղջիկներին թագ ու պսակի արժանացնելու համար: Ավելացած հինան վերադարձվում էր փեսայի տուն՝ նույնը պնտեղ կրկնելու<sup>15</sup>: Հայնիում հինալելու արարողությունը ուղեկցվում էր հետևյալ երգով.

Կանչեցեք նենեն թող հինա բերե,  
 Կանչեցեք մամուն թող հինա բերե,  
 Կանչեցեք քորոն թող հինա բերե,  
 Սիսեռ լցուցանք ջուրը  
 Կանչեցանք փեսկան քուրը<sup>16</sup>...

Փեսացուին լողացնելու, սափրելու և հագցնելու արարողությունները տեղի էին ունենում նույն՝ ուրբաթ օրը, հարսնածը ճանապարհելուց հետո: Բաղեշում ուղեկից մակարոնները փեսային լողացնում էին բաղնիքում: Տաք եղանակին լողացնում էին գյուղից ուրու, գետակի կամ աղբյուրի մոտ: Փեսայի երթն ու վերադարձը ուղեկցվում էր երկու խմորի քսածակված մակար-ագապարիների, գյուղի չամուսնացած երիտասարդության հոգով ու պարով: Ընդ որում, մի կողմը երգում էր, մյուս կողմը՝ երգով պատասխանում: Մակարոնների հետ տուն վերադառնալիս նրան դիմավորում էին մայրը և այլ կանաչք՝ զանազան մոգերով ու քաղցրեղենով լի սալաները բարձր պահած<sup>17</sup>:

Աղձնիքի հովտային Ղուբին և այլ գյուղերում փեսային և երիտասարդների խմորն դիմավորում էին սիսեռով, չամչով և թարմ մրգերով լի սալայով՝ կողջեղին (եզդերին) 12 ձող ամրացված, որոնց գլխերին հագցրած էր նու ու խճճոր, ձողերից էլ մախապատրաստվող փեսածառի չորացրած մրգերի շարանները կախված: Երիտասարդներին մոգերով ու չիր-չամիչով դիմավորում էին աղջիկներն ու ջահել կանաչք՝ նրանք ու պարերի ուղեկցությամբ: Լողացնելու ծեսին այստեղ հաջորդում էին փեսային սափրելու, զգեստավորելու արարողությունները և փեսածառի պատրաստումն ու զարդարումը: Լեռնային գավառներում տղային լողացնում էին տանը:

Փեսային լողացնելուց հետո, ըստ սասունցիների սովորների, նրան հագցնում էին քավաքված տղամարդ հարսնուհիների ներկայությամբ: Մակարոններից մեկը սկուտեղով բերում էր նրա նոր զգեստները, երկրորդը հագցնում՝ լուրջաբանչուր հագուստին նվիրված երգեր երգելով և բարեմաղթություններ անելով: Ներկայերը մաղթում էին. «Սալոված շնորհավոր անե»:

Խարզանի Հազո քաղաքում փեսայի հալավորհների երգերից մեկը հետևյալն էր.

<sup>15</sup> ՏՆՆ ԴԱՆ, Գ. 13, էջ 97:

<sup>16</sup> ՏՆՆ Բ. Ժամկոչյան, Հայնի, էջ 68:

<sup>17</sup> ՏՆՆ ԴԱՆ, Գ. 13, էջ 23-25:

Նայե փեսու իշխիկին (բաճկոն),  
 Նայե փեսու լալալին (գեղեցկությանը),  
 Դրածնին մեջ ժողովին,  
 Եկեք տեսեք անուշին,  
 Նայեք փեսու էրեսին,  
 Որը կըմամաի խնծորին,  
 Նայեք փաշի (փեսու) աչքվուն,

Եկեք մայեք մեր փեսան,  
 Համար քեֆով (ուրախ) հարսկան<sup>18</sup>:

Զգեստավորմանը զուգընթաց՝ երիտասարդները շուրջպարեր էին պարում՝ խմբերգեր երգելով:

Թագվորին մտնեցնում էին հանդիսականների մեջտեղը, կողքերը՝ երկու երիտասարդ՝ լուրաքանչյուրը մեկական մոտ ձեռքին, հետևում մեկ ուրիշ երիտասարդ՝ «թագվորի թագը» բռնած, և բոլոր «ազապները», երկու խմբի բաժանված, աջ և ձախ կողմերում, թևերով մեկ-մեկու ուսած, իսկ խաչեղբայրը՝ նրանց մոտ՝ զինով փարչն ու կթղան ձեռքին: Վերջում *մախաղը* ուսին գալիս էր վարսավիրը և սկսում փեսայի սափրելու ծեսը, որը մնան է ձմերուկ ծախելու արարողությանը: Վիզը սափրելու փոխարեն վարսավիրը սկսում է գիծ-գիծ ու մեջ-մեջ սափրել այնպես, որ «սև ու ճերմակ քառակուսիների կմնանի թագվորի վիզն ու երեսը. ճերմակները ձմերուկի արտերն են, իսկ սևերը՝ ձմերուկները, որ պետք է վաճառքի հանվեր»: Նրանցից մեկը սկսում է կանչել. «Աղեկ հասուն, ճիտու (աքաղաղի) արյուն ձմերկըներ կան ծախու, գնող կա, թող իզա»: Նախ փեսայի մայրն է գալիս, *ստակ* (փող) տալիս խաչեղբորն ու վարսավիրին, ապա համբուրում փեսայի ճակատը: Վարսավիրը սև արտերից մեկը սափրում է՝ իբրև թե մի ձմերուկ վաճառվեց: Այդ պահին երիտասարդներից մեկը բարձրաձայն սկսում է քարոզել. «Թագավորներն է եկել, ջորն բեռ մը ոսկի է բերի, մեր աչունու վրայեն է քելի ու եկել»: Այս խոսքերին հաջորդում են երիտասարդների «շեն մնա, շեն» գոչումները: Նույն արարողությունը կրկնվում է ամեն ձմերուկ ծախվելիս՝ տարբեր դարձվածքներով պատվելով փեսայի մկեր տվող ազգականներին: Դրանից հետո թագվորի գլուխը դնում են վարդապատկ թագը, իսկ ազապարիները բարձր ձայնով ու փոփոխական եղանակներով նրան են գովում «թագվոր բարով հազար խերով»<sup>19</sup>:

Բաղեշում երեսը սափրելիս 2-3 տեղ մազափունջ էին թողնում, որ կոչվում էր *փեսի մշան*:

Աթոռին լուռ ու մունջ մտած թագվորին հագցնում էին կարմիր ու բանված պճղմավոր չուխա, ճերմակ լաչակի մեջ դրված կարմիր խնձոր ձեռքը տալիս՝ մինչև պսակի ավարտը կրելու և մինչ լուսանալը երգով ու պարով շրջապատում նրան:

Զգեստավորմանը հաջորդում էր փեսայի *ածիլումը*: Վարսավիրը նրա երեսն ածիլում էր ընդհատումներով, իբր թե ածելին չէր կտրում և, փեսայի երեսը բոստան համարելով,

<sup>18</sup> Տե՛ս «Բիւրակն», 189, թիվ 3, էջ 37-38:

<sup>19</sup> Տե՛ս «Բագմավաթ», 1867, էջ 310:

վաճառքի էր հանում ու գործն ավարտին հասցնելու համար քավորից վարձ-տուգանք կորզում: Հանդիսակաճները և փեսամայրը թագվորին և նրա թիկնապաճներին դրամական համեստ նվերներ էին տալիս: Այս արարողությունից հետո էր, որ մակարներից մեկը թագն ու պսակը դնում էր փեսայի գլխին՝ նրան թագավոր հռչակելով և բազմեցնելով գահին<sup>20</sup>:

Տանը կերուխումը շարունակվում էր, որին մասնակցում էր թագվորն՝ իր թիկնապաճներով: Զուգընթաց պատրաստում էին պսակածաղը: Խնջույքի տանը փեսայից աչ նըստում էր քավորը, ձախում և շուրջը կանգնում էին մակարները: Վերջիններից մեկը տան դռնից մինչև թագվորի գահն ու օջախը լայն ճամփա էր բացում, մի այլ մակար հայտարարում էր «թագավորի երես գալու» ծեսն սկսելը: Երգ-պարը դադարում էր: Քիչ անց շարան-շարան սկսում էին ներս մտնել փեսայի բարեկամ և հարևան կանայք՝ գլխավերևում պահած մի-մի մեծ սկուտեղ, որոնց շուրջքոլորը մոտեր էին վառվում և ծանրաբեռնված էին լինում նվերներով, խորվուներով, գաթամերով, սեր ու կարագով, մածուկով, թարմ ու չոր մրգերով: Նրանցից ամեն մեկը սկուտեղը հանձնում էր մակարին, համբուրում թագվորի ճակատն ու այտերը, ապա և՛ քավորի ձեռքը (առաջինը բերում էին քավորի նվերն ու սեղանը): Այդ պահին մակարը հայտարարում էր «թագվորի երես եկող» կնոջ անունը, թվում նրան բերած նվերներն ու բարիքները և թագվորի անունից շնորհակալություն հայտնում, որին ի պատասխան հանդիսակաճները միաբերան գոչում էին. «Ծե՛ն մնա, շե՛ն»: Ստացված բարիքները մակարը բաշխում էր հանդիսակաճներին: Արարողությունը տևում էր մի քանի ժամ («թագվորի երես» եկողների թիվն անցնում էր 50-60 հոգուց): Այդ օրը *մանգոպազի* «կարգադրությամբ» ենթակա «գինվորները» կատակային բնույթի հանձնարարականներ էին կատարում. հարսանքավորներից ձեռք էին բերում հավ, ուտելիք, միրգ ու չամիչ, իսկ «չենթարկվողներին»՝ «ծե՛ծ» էին տալիս<sup>21</sup>: Ազատարար գիշեր համարվող այդ օրը ամեն տեսակ զվարճություններ կազմակերպող երիտասարդներին էին այցելում լեռներում թաքնվող հայդուկները՝ ռազմահայրենասիրական դաստիարակչական նպատակներով:

Ուրբաթ լույս շաբաթ գիշերը կերուխումը մինչև լույս շարունակվում էր նաև հարսանքուհի հայրական տանը: Լուսաբացին տղայի կողմից ուղարկված հարսանեկան զգեստներն էին հագցնում հարսնացուին, որով աղջիկը կերպարանափոխվում, *հարս էր դառնում*: Նորահարսին շրջապատում էին երկու կողմի աղջիկները՝ *ծաղկերները*, քավորկընդ գլխավորությամբ, մազերն էին հյուսում և զգեստ հագցնում, մյուսները տխրեքանգ երգեր էին երգում: Յուրաքանչյուր զգեստ հագցնելիս *ծաղկերները* նոր երգ էին երգում՝ հուզելով աղջկան և նրա հարազատներին: Սասնա Հազո քաղաքում երգվող երգերից մեկն այսպիսին էր.

Մընք տուն իջանք ուշիկ-ուշիկ,  
Փեսան կաներ (կնայեր) լոկի, մնջիկ,  
Մշու սարեր մշուշ էր,

<sup>20</sup> Տե՛ս Վ. Պեպոյան, էջ 248-249, ԴԱՆ, ք. 2, էջ 201:

<sup>21</sup> Տե՛ս ԴԱՆ, ք. 13, էջ 89:

Աղջկա անուն Քնքուշ էր,  
 Հարսի քողը մախշուն էր,  
 Փեսի մատեն (դեմքը) անուշ էր,  
 Փարա չիկա տուն ի գամ,  
 Օսկի չիկա, քեզ ի տամ,  
 Էկո երթանք Ս. Նշան,  
 Օսկի մատնիք (մատանի) քու նշան,  
 Հարսի սղեր կեղտոտ էր,  
 Փեսի սիրտը քառպօտ (բարկացկոտ) էր<sup>22</sup>:

Զգեստավորման ընթացքում նոր զգեստները օրհնում էր քահանան: Հարսի հյուսքե-  
 ռից նաև կախում էին չամիչ ու ընկույզի միջուկի շարեր՝ պտղունակություն հաղորդելու  
 նպատակով: Հովտային շրջաններում հարսի զգեստավորմանը ինչ-որ չափով մասնակ-  
 ցում էր նաև նրա եղբայրը, որը հարսի հագուստի զանազան տարրերի մեջ որևէ «թերութ-  
 յուն» հայտնաբերելու պատրվակով քավորից ստանում էր դրամական նվեր<sup>23</sup>:

Հարսը, նրա մայրն ու քույրերը այդ գործողությանը հետևում էին արցունք թափելով,  
 մինչդեռ զգեստավորողները քաջալերման և մխիթարանքի խոսքեր էին ասում, ոմանք էլ  
 հարսի դեղին *մուճակների* (կոշիկների) մեջ կորեկի հատիկներ էին լցնում՝ ի նշան նրա  
 արգասավորության: Այս պահին հարսի հոր տուն էր խուժում պատանիների մի խումբ՝  
 «սկոռ ժածախներ» պահանջելով. չտալու դեպքում իբր «հարս ու փեսի աստամները կսկսին  
 շարժվիլ, խախտվիլ ու թափվիլ»: Նրանց պահանջն էր մեկ խորվու գառ, որն անմիջապես  
 մատուցվում էր:

Հարսին հագցնելուց հետո զույգզույց, մինչև ծնկները իջնող քող էին զցում զլխին,  
 որից հետո հարսնաժը տնից դուրս էր գալիս մեծ աղմուկով, քանզի ոմանք հարսի հոր  
 տնից պուտուկի խուսի, *սկավառակ* (սկուտեղ, պնակ) կամ ափսե էին գողացել, որ իբրև  
 վահան պետք է գործածեին պսակից հետո հարսի դեմ արախաղությամբ զնացած միջո-  
 ցին: Երբ լուր բերողները շուտ աստղը ելավ՝ բացականչություններով տեղեկացնում են  
 հարսնաժի վերադարձի մասին, քավորակինը շտապ հիմա է դնում «*հարսնեց հյուրերո*»  
 ձեռքերին, որից հետո հարսանքատունը դատարկվում է, շտապում են հարսի կողմից  
 եկած հյուրերին իրենց տուն հրավիրել<sup>24</sup>:

Հրածեշտի երկխոսություն էր սկսվում հարսնաժի դեկավարի և հարսնացուի մոր միջև,  
 և *խոնդի* կոչվող հարսնուորները հարսի էգ ձին ուռքի մնամ զարդարելուց և նրա մեջքին  
 օծիտի մաս կազմող կարպետն ու ապագա նորածնի համար նախատեսված վերմակը  
 փոելուց հետո՝ ճամփա էին ընկնում:

Աղձմիքի հովտային շրջաններում արարողություն էր նաև հարսին ձի նստեցնելը: Այդ  
 պահին ապանդակը բռնած հարսնաքույրը քավորից պահանջում էր իր նվերը՝ իբր հար-  
 սը անկարող է ձի հեծնել: Նվերը ստանալուց հետո քավորին թույլատրվում էր օգնել հար-

<sup>22</sup> Տե՛ս «Բիրակն», 1899, թիվ 3, էջ 37-38:

<sup>23</sup> Տե՛ս ԴՆԼ, ք. 13, էջ 19-20, 99:

<sup>24</sup> Տե՛ս «Բազմավեպ», 1867, էջ 310:

սին: Հարսնաձիու սանձը բռնում էր հարսնեղբայրը, իսկ երկու կողմից ձիու ասպանդակներից բռնած ուղեկցում էին հարսնաձի մեկնած աղջիկները: Վերջիններս կատարում էին հարսի գովքը՝ մի խումբը երգելով, մյուսը՝ կրկնելով: Նախքան հարսնաձի հարսի հոր տնից դուրս գալը՝ հարսնացուի համայնքի երիտասարդները ստեղծում էին *ջիրհնդավորների* խումբ, որը գյուղի սահմանագլխին հարսի ճանապարհը «բացելու» համար փեսացուի հորից կամ քավորից պահանջում էր *ազապների կիսկ* կոչված գառ կամ դաշույն: Վերադարձի մասին շուտ ավետողը փեսայի մորից նվեր էր ստանում: Հարսնաձի վերադարձի ճանապարհը կարող էր փակել հովիվն՝ իր հոտով: Նա մի խոյ բռնած ընդառաջ էր գնում հարսին: Քավորը, իսկ Սասունում՝ փեսացուի հայրը, ընդունում էր խորհրդանիշ-նվերը, կտրում ականջը, որի արյունով խաչ էր անում հարսնաձիու ճակատին, իսկ հովիվին տալիս էր դրամական նվեր: Այլ տարբերակում այդ գործողությունը կատարում էր հարսի ձիու սանձը բռնած հարսնեղբայրը: Երբեմն էլ գառան փոխարեն մատուցում էին ջրով լի սափոր<sup>25</sup>:

Առավոտյան հեռվից նկատելով, որ հարսնառը գալիս է, փեսածառն են զարդարում: Այն շատ տեղերում փշատենու ճյուղն է. յուրաքանչյուր փշի վրա անցկացնում էին թարմ ու չոր մրգեր, չամչի, ընկույզի, սիսեռի շարաններ և պաստեղներ՝ պտուղների հյութից եփած լավաշանման չորացած ուտելիք, մի կողմից էլ սպիտակ, մաքրված աքլոր կախում ծառի գլխից: Երբ հարսնառը մոտենում է, փեսային երգերի ուղեկցությամբ բարձրացնում էին կտուրը և նստեցնում փեսածառի տակ: Ազապչարիները պարտավոր էին հսկել, որ փեսայի պատիվն ու հեղինակությունը խորհրդանշող ծառը չգողանան: Այդ պահին թագվորի մայրը խնձոր է տալիս որդուն, որը նա պարտավոր էր նետել հարսին. չդիպչելը վատ նշան էր: Մինչ ազապչարիները հսկում էին կտուրը և վայելում մրգեր, գյուղի պատանիները աթարները իբրև ջահեր թոճրի շջերի վրա ամրացրած՝ պատրաստվում էին դիմավորելու հարսանքավորների վերադարձը:

Փեսայի գյուղի (կամ նույն գյուղում) հյուրընկալողների մի բազմություն սպասում էր ճանապարհի գլխին, և հարսնաձի այստեղ հասնելուն պես սկսվում էր հրավերքը. բոլորը տեղավորվում էին հարսանիքին մասնակցող գյուղական ընտանիքներում, ուր ճոխ հյուրասիրվում էին<sup>26</sup>:

Փեսացուի թիկնապահները, իմանալով, թե մոտավորապես օրվա որ պահին հարսնառը կհասնէր տուն, նախապես բարձրանում էին փեսահոր տան կտուրը՝ *բերդը*: Իսկ գյուղի պատանիները վառվող աթար-ջահերով ընդառաջ էին գնում հարսնետրների: Փեսացուի գյուղում հարսին դիմավորում էին առատ սեղաններ բացելով: Մինչդեռ հարսի կտրիճների բանակն աղմուկ-աղաղակով, ձիախաղերով, հրացանածգությամբ և հոխորտանքներով հարձակվում էր բերդի վրա: Այստեղ թագվորը, քավորը և ուրբակիր մակարը կանգնած սպասում էին՝ առանց կովին մասնակցելու: Մյուս մակարները, չնավելով բերդի բո-

<sup>25</sup> Տե՛ս ԴՆՆ, Գ. էջ 23-25, 99:

<sup>26</sup> Արագածոտնի մարզի Թ-այիլի նեթաշրջանի սասունցիներով բնակեցված Վերին Բազմաբերդ գյուղում Ավեր Դազարյանի հարսանիքին, բանասաց Վոստ Գալոյանի հավաստմամբ, հարսնաձի վերադարձին գյուղամիջյան ճանապարհին բացվել էր ուրբասրկներով և ընտիր խմիչքով 22 սեղան՝ հարսին պարկանող նվերներով (կյուրերը գրի ենք առել 1973 թ.):

լոր մատչելի տեղերը, թույլ չէին տալիս, որ հարսի կտրիճները բարձրանան այնտեղ: Եթե հաջողվեր բարձրանալ և ձեռք տալ թագվորին կամ ուղքին, հաղթող էր ճանաչվում հարսը, հակառակ դեպքում հաղթությունը շահում էր փեսան:

Այս երկու բանակների միջև մղվող կատակակոխիվը հետզհետե տաքանում և 1-2 ժամվա ընթացքում երբեմն վեր էր ածվում իսկական ծեծկոտուքի: Լիճում էին մարմնական վնասվածքներ ստանալու դեպքեր, բայց երբ մեկը կամ մյուսը հաղթում էր, անմիջապես հաշտվում էին:

Այդ ժամանակ փեսան կարմիր խճճորով մշամ էր բռնում իր հարսնացուին, որով յուրային էր դարձնում նրան: Հարսնառը բակ մտնելիս ազապչարիները կողոպտում էին փեսածառը և այն նետում բակը՝ հարսնատի գլխին: Փեսային իջեցնում են կտուրից հարսին ձիուց իջեցնելու պահին: Սկսվում էր հարսի և փեսայի գլխին չոր մրգեր տեղալու ծիսական արարողությունը՝ նրանց արգասավորություն հաղորդելու նպատակով<sup>27</sup>:

Աղձնիքի հովտային շրջաններում, Հզնամիր, Գալհուկ, Ղուբին և այլ գյուղերում փեսան ոչ միայն չէր մասնակցում, այլև չէր դիմավորում հարսնածին: Մինչև նա կտուրին «պաշտպանվում» էր, հարսնածին դիմավորող փեսայի մայրն, աջ ձեռքում՝ շերեփ, ձախում՝ հաց, պարելով մոտենում էր փեսածառի նման զարդարված հարսնաձիուն, շերեփով թեթևակիորեն խփում ձիու ճակատին, մի պատռո հաց տալիս կենդանուն, ապա շերեփն ու հացը հանձնում հարսին. սովորույթը խորհրդանշում էր տանտիկնության հանձնումը նորահարսին:

Ըստ ուջանաբնակ սասունցի ծերունիների պատմածի՝ իրենց մոտ հարսանքավորներին դիմավորում էին հրացանաձգությամբ: Հարսին փեսայի տան բակում դիմավորում էին գլխին չիռ ու չամիչ լցնելով: Փեսայի մայրը երկու լավաջ ձեռքին ընդատաջ էր գալիս հարսի խմբին և, առանց երեսը բացելու, հացերը դնում նրա ուսերին՝ ասելով. «Ուղոք խերով լինի, ամբարներդ հացով լի»: Հարսի երեսի քողը հասնում էր մինչև ծնկները: Տան շերեփն դնում էին կավե *քասան*, որը փշրելու էր հարսը՝ ուղքի հարվածով:

Այդ պահին կտուրին երկու հակամարտող երիտասարդների խմբեր «պայքարում» էին փեսածառին տիրանալու համար: Փեսայի գլխարկը փախցնողը կարող էր իր ուզած գնով «վաճառել» ազապչարիներին, որոնք իրենց «պատվի» համար պարտավոր էին գնել այն<sup>28</sup>: Իսկ Բաղեշի հարսանեկան սովորույթի համաձայն՝ փեսայի մայրը, որը մարդաթող կին չպետք է լիներ, այլ *բախտավոր*<sup>\*</sup>, յոթ հաց է գցում հարսի թևերին խաչի ձևով՝ *խաչ ու փաթ*: Այնուհետև ձիուց դեռ չիջած հարսի գիրկն էր տալիս կաթնակեր տղա երեխա՝ արու գավակներ ունենալու ակնկալիքով: Որպեսզի հարսին ձիուց իջեցնեին, ձիու սանձը պահող հարսնեղբորը տալիս էին նվեր՝ գառ կամ երինջ: Հարսնեղբոր ստացած բոլոր նվերները պատկանելու էին հարսին՝ որպես նրա օժիտի մի մաս: Հարսի եղբայրը նվերի խոստումը ստանալով՝ քրոջը հանձնում է հարսնաքրոջը և փեսայի քույրերին: Ձիուց իջեցնելուց հետո հարսի ձեռքն էին տալիս չոր մրգերով լի չօգտագործված սափոր, որը գետնին

<sup>27</sup>Տե՛ս ԴԱՆ, ք. 13, էջ 24-25:

<sup>28</sup>Տե՛ս նույն տեղը:

\* Այսինքն մեկ մարդ առած կին, իսկ 2-3 ամուսին առած կինը իրավունք չունի անգամ հարսանիքի հաց թխել:

խփելով պետք է կոտրեր՝ իբրև զոհաբերություն՝ հավանաբար հասցեագրված տնտեսաբանության աստվածուհի Նանեին: Բացի այդ, կավե սափոր գետնին խփելով կոտրելը կուսությունը զոհաբերելու ծեսի խորհրդանշումն էր:

Հայնիում պահպանվել էր մեկ այլ ուշագրավ սովորույթ. նորապսակների պատվին դրան սեմի վրա ոչխար էր մորթվում, մվեր տալով՝ փեսան անցնում էր ոչխարի արյան վրայով, նրա հետևից՝ կնքահայրը, հարսն ու ժողովուրդը: Հարսը մախ աչ ոտքը ներս էր դնում, որ բախտավոր լինի, ապա կավե սափոր, կծեր էին տալիս, որ հարսն ու փեսան և կնքահայրը կոտրեին սեմին, ոտքերի տակ՝ չարը խափանելու համար: Նախքան տուն մտնելը՝ հարսի ձեռքը նուր էին տալիս, որ սեմին հարվածելով կոտրեր, իսկ ազապ տղաներից մեկն էլ փեսային տալիս էր կոտրելու աղջկա հոր տնից գողացած գրպալը<sup>29</sup>: Մեկ այլ սովորույթի համաձայն՝ ափսեմ կամ կավե փարչը դնում էին դրան շեմին, որի վրա մախ պետք է ոտքը դներ փեսան, ապա հարսը՝ կոտրելու նպատակով: Դրանից հետո սկեսրոջ ուղեկցությամբ հարսի շքավումբն առաջնորդվում էր նրան հատկացված կամանց բաժին, որպեսզի հարսը նստի, որտեղ ստանում էր սկեսրոջ մվերը՝ ոսկեշար *ճակատնոց* կամ այլ զարդ, և հարսի գիրկն էին դնում դարձյալ տղա երեխա՝ վերը նշված ակնկալիքով: Երկու ղեպքում էլ հարսը տալիս էր պատասխան մվեր՝ վաղօրոք գործած զուպաներ: Իսկ այն տղաները, որոնք այստեղ դիտում էին հարսին, վերջինիս կողմից ստանում էին *չիր ու չաւսիջ*:

Հարսի դիմավորումը փեսայի հոր տան բակում ուղեկցվում էր մենամարտի արարողությամբ: Փեսայի կողմի երիտասարդները և հարսնածը դիմավորողները բաժանվում էին երկու հակամարտ խմբի և փեսայի ծնողներին մարտի հրավիրում՝ կոխ բռնել տալով: Փեսայի մորը ձգտում էին հաղթող դարձնել, իսկ հարսանքավորների գլխներին մրգեր ու քաղցրավենիք էին շաղ տալիս<sup>30</sup>: Մակարները վերը նկարագրված «ճակատամարտից» հետո փեսային նստեցնում էին հարսնածիում (այդ ձին փեսայի հոր տնից էր տարվում հարսին բերելու), երգելով ու աղմուկով պատեցնում գյուղի շուրջը, որից հետո ուղեկցում քավորի տուն, որտեղ նա հյուրընկալվում էր մինչև ուշ երեկո: Այսպես, որոշ վայրերում հարսին անմիջապես տանում էին փեսայի տուն, իսկ փեսային՝ քավորի տուն: Այդ առիթով քավորի տան բակում գառ էր մորթվում: Այդ միջոցին եթե հարսի «գինվորներից» մեկին հաջողվեր «գողանալ» փեսայի կոշիկներից մեկը և հասցնել հարսին, նրանից կատանար մրգեղեն մվեր, իսկ եթե փեսայի կտրիճներից մեկին հաջողվեր «գողանալ» հարսի կոշիկներից մեկը և հասցնել փեսային, քավորից կատանար նույնպիսի մվեր<sup>31</sup>:

<sup>29</sup> Հայնիում և շրջակա գյուղերում հարսնածը և դիմավորողները բռնում էին շուրջպար (կովնք), երկու մասի բաժանվելով, երգում էին կարակերզեր, ինչպես, օրինակ՝

**Չիմ իզի, չիմ իզի (չնմ գար),**

**Ոչխար չառնիմ չիմ իզի**

Երկրորդ խումբը պարասխանում էր.

**Մըն ի գաս, մըն ի գաս (պիտի գաս)**

**Պարոսիս, փթսխիս մըն ի գաս:**

Երգը ուղեկցվում էր հարս ու փեսի ոտքերի փակ ոչխարը մորթելով (վրն Բ. Ժամկոչյան, Հայնի, էջ 70):

<sup>30</sup> ՏՆՆ ԴԱՆ, փ. 2, էջ 204:

<sup>31</sup> ՏՆՆ ԴԱՆ, փ. 13, էջ 26-27:

Այնուհետև երեկոյան քավորի տնից մակարների ուղեկցությամբ նվազով փեսային բերում էին հարսի մոտ՝ կեսպասակը կատարելու: Փեսային հարսը դիմավորում էր հոտնկայա, գլուխը խոնարհած, ձեռքերը կրծքին խաչաձև ծալած: Դրանից հետո նրանց մտեցնում էին կողք կողքի՝ բարձերի վրա: Նորասպասկների միավորումը տեղի էր ունենում խնջույ-էին գիշերին կազմակերպվող պարի ժամանակ, երբ քավորը, փեսայի ձեռքը քից հետո, ուշ գիշերին կազմակերպվող պարի ժամանակ, երբ քավորը, փեսայի ձեռքը տեցնում էին թագվորին, օղակում էին նրանց ճկույթները, ձեռքները տալիս վառվող երկու մոմ, իսկ քավորին հարսի գլխավերևում պահում էր վառվող մոմերով զարդարված գամա: Բավորը յուրաքանչյուր պարը ավարտվելիս «շաբաշ» էր տալիս նվագողներին. «ճկույթին» ծանր պարին հաջորդում էին «չարխուշտա», «հըթըշի» (հարթաշի) պարեղանակները: Հարսնուհիները հարս ու փեսայի մասնակցությամբ «ճկույթին» պարեղանակի ներքո պարտադիր յոթ պտույտ շուրջպար էին անում: Պարբաշին քավորն էր՝ աջ ձեռքում պահած նախշուն թաշկինակ: Սովորույթի համաձայն՝ քավորին, հարսին ու փեսային յոթ անգամ պտտեցնում էին մեկ թոնրի շուրջը: Այդ արարողություններին հաջորդում էր թոնրի շուրջը կատարվող *կես պասակը*. քահանան նորասպասկների պարանոցից փոքր խաչեր էր կախում<sup>32</sup>:

Հարսանիքի ընթացքում հարսի երեսը քողով ծածկված էր մնում: Մինչև հարսանիքի երրորդ օրը փեսան հարսի դեմքը չէր տեսնում: Այդ օրն էլ քահանան վերին տանը, թոնրի շուրջը կատարում էր կեսպասակի արարողությունը: Հարսի երեսը բացելու համար քահանան թագվորից նվեր էր պահանջում: Վերջինս մոր ձեռքն էր տալիս արծաթյա գոտին՝ հարսին հանձնելու համար: Այս գործողությունից հետո նոր նրանց թողնում էին մենակ:

Աղձնիքի հովտային գյուղերում հարսանիքի վերջին՝ երրորդ օրը հայտնի էր *սըբհի* (նվեր տալու) օր անունով: Այդ օրը քավորը հրապարակում էր հանձնվող նվերների տեսակը և արժեքը, մեծարում այն հանձնող ազգական-բարեկամներին, հարևան-համայնքակիցներին: Ներկայումս էլ Մասիսի ենթաշրջանի գյուղերում հաստատված Բշերիկի դաշտի գյուղերի վերաբնակիչները հարսանիքի ժամանակ փող են դնում փեսայի սեղանին առանձնացված մի ափսեում, իսկ քավորը գրում է գումար տվողի անունը և չափը<sup>33</sup>:

Բոլորովին այլ էր պատկերը Բաղեշում, ուր հարսնածը (որին մասնակցում էին թե՛ քավորը, թե՛ փեսան) աղջկա տնից ճանապարհվում էր նախ եկեղեցի՝ պսակի խորհուրդը կատարելու, և ապա միայն ուղղվում տղայի տուն: Հարսնածին ընդառաջ էին գալիս տղայի ծնողները և աղջկա տուն չզնացած հարազատներն ու բարեկամները: Հանդիսականների պահանջով ու գոչյունների ներքո տղայի ծնողներն իրենց «ուժն էին չափում» կոխ բռնելով, որում, որպես կանոն, կինը պետք է տապալեր ամուսնուն<sup>34</sup>:

Ըստ մեկ այլ տարբերակի՝ հարսնածի վերադարձին հարսին առաջինը տանում էին ոչ թե փեսայի, այլ քավորի տուն: Այնտեղ հարսին քավորը դիմավորում էր *քավորասեղան* բացելով և զգեստացու կտոր նվիրելով: Բավորի տանը հարսն իրավունք չուներ խոսելու,

<sup>32</sup> Տն՝ ՂԱՆ, ք. 13, էջ 27-28:

<sup>33</sup> Տն՝ ՂԱՆ, ք. 13, էջ 30:

<sup>34</sup> Տն՝ ՂԱՆ, ք. 1, էջ 78-79, ք. 2, էջ 202-204:

նասելու, ուսելու<sup>35</sup>:

Հարսնառի վերաբերյալ նյութերը ցույց են տալիս, որ Աղձնիքում, հատկապես Սասունի լեռնաշխարհում, հարսանեկան ծիսակատարությունները պահպանել են մի կողմից հայրատեղային (պատրիարխալ) բնակվածության, մյուս կողմից՝ առևանգմամբ ամուսնության սովորույթների վերապրուկներ:

Ազգագրագետ Խ. Սամուելյանը նկատել է, որ հայ հարսանեկան արարողությունների մասնակից մակարները և առհասարակ հարսնառի զինված անդամները երբեմնի *հրոսակներն* էին, որոնք փեսացուի գլխավորությամբ կազմակերպում էին աղջկա առևանգումը<sup>36</sup>:

Քանի որ մակարները Սասունում մնում էին փեսայի հետ, նրանց դերը լիովին ստանձնում էին հարսնառի զինված կորիճները, որոնք, սակայն, աղջկա գյուղը մեկնելիս զենքերը չէին գործադրում, որովհետև դրանք խորհրդանշական կիրառություն ունեին: Միայն զենքերի արտաքին փայլն ու հրացանաձգությունն էր, որ իր վրա էր հրավիրում աղջկա համայնքի ուշադրությունը<sup>37</sup>:

Սասնա այս հարսնառի բնույթը երկակի էր: Այն գլխավորողը ոչ թե փեսացուն էր, այլ վերջինին հայրը կամ հորեղբայրը, որն, իր հերթին, նույնպես երկդիմի անձնավորություն էր: Ըստ իս, իբրև տղայի համար հարսնացու բերող հայրը երբեմնի առևանգիչների խորհրդանշառաջնորդն էր: Բայց նա նաև պատգամախոսությամբ հարս բերող անձնավորություն էր: Ծիսական այս սովորույթների մեջ կա խոր անցյալի այլ շերտ. հարսնածի անդամները և՛ առևանգիչներ են, և՛ միաժամանակ հարսնացուի բանակը՝ փեսացուի բանակի դեմ կռիվ մղելու նպատակով: Եվ ահա, այդ «բանակը» հարսնառի վերադարձին իրոք կատաղի կռիվ է մղում փեսացուի «բանակի» դեմ: Ուրեմն՝ ո՞վ է այս հարսնացուն, ինչո՞ւ հարսնորները հանկարծ դարձան նրա բանակի զինվորները, ի՞նչ էր *բերդ* կոչվածը, որը հարսի կողմից պիտի գրավվեր: Ո՞վ էր այս փեսացուն, որին *ձեռք տալով*<sup>38</sup> հարսնացուի բանակը փառք ու պատիվ պիտի բերեր հարսին: Պարզ է, որ այստեղ գործ ունենք ամուսնության բոլորովին այլ մի ձևի հետ: Այսինքն՝ ծեսը հայրատեղային բնակվածության երևույթի հետ պահպանել է մայրական տոհմից աղջկան հայրիրավական տոհմում հարսնացնելու հնագույն սովորույթի անցումային ժամանակի հակասությունները: Իսկ գրավվող բերդն, ամենայն հավանականությամբ, խորհրդանշում է հայրիրավական տոհմը, որից աղջիկը ետ է պահանջում իր բռնադատված իրավունքը:

<sup>35</sup> Տե՛ս ԴԱՆ, Գ. 13, էջ 114:

<sup>36</sup> Խ. Սամուելյան, նշխ. աշխ., էջ 102:

<sup>37</sup> Ակարներ, որ Սասունի հարևան Վասպուրական գավառում հարսնառի կորիճները զինվում էին գույգ մահակներով: Դրանցից մեկը ծառայում էր իբրև հարվածող գորգ, մյուսը՝ իբրև վահան, երկուսն էլ խորհրդանշառաջնորդ զենքեր էին: Երբ հարսնառն այդպես զինված հասնում էր աղջկա գյուղը, վերջինիս ջահկները նույն զենքերով դիմագրավում և կռվի էին բռնվում եկողների հետ: Կարակաթիվը փնտում էր մոր մեկ ժամ (Վ. Բոլոյան, Հայ ժողովրդական խաղեր, հ. 1, 1963, էջ 251-252): Սա արդեն լիակատար կռիվ էր հանուն աղջկա առևանգման: